ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան **«30» նոյեմբերի 2023թ.**

2023 թվականի նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) Կառավարման խորհրդի (այսուհետ՝ ԿԽ) հերթական նիստը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի՝ «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի կազմը հաստատելու մասին» թիվ 738-Ա որոշման Հավելվածով հաստատվել է Կառավարման Խորհուրդը հետևյալ կազմով՝

Գ. Սանոսյան – ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար (խորհրդի նախագահ),

Կ. Ցուցուլյան – ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ – փրկարար ծառայության տնօրեն,

Ա. Դանիելյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ,

Ա. Հարությունյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,

Ն. Տերյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ,

Ա. Ավանեսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,

Ա. Ղուլարյան – Քաղաքաշինության կոմիտեի նախագահ,

Ս. Թովմասյան – Կադաստրի կոմիտեի ղեկավար,

Տ. Քեյան – «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ,

Տ. Բաբայան «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության» ներկայացուցիչ (համաձայնությամբ),

Դ. Սողոմոնյան - «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու,

Ս. Հովսեփյան - «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան»-ի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Խորհդրի նիստին մասնակցում են Խորհրդի բոլոր անդամները:

Քվորում առկա է:

Օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

1. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատում **(Զեկուցող՝ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավար),**

2. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրի հաստատում **(Զեկուցող՝ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավար),**

3. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում **(Զեկուցող՝ Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության պետ),**

4. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում **(Զեկուցող՝ Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության պետ)**,

5. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագծի քննարկում և հաստատում **(Զեկուցող՝ Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության պետ)**,

6. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագծի քննարկում և հաստատում **(Զեկուցող՝ Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության պետ)**,

7. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատում (**Զեկուցող՝ Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության պետ**):

Օրակարգը հաստատվեց բաց քվեարկությամբ՝ ձայների «12» կողմ, «0» դեմ համամասնությամբ:

Օրակագարգում ընդգրկված 1-ին հարցի վերաբերյալ խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների «12» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Օրակագարգում ընդգրկված 2-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների «12» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

Օրակագարգում ընդգրկված 5-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների «12» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

Օրակագարգում ընդգրկված 6-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների «12» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

Օրակագարգում ընդգրկված 7-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների «12» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Գ. Սանոսյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Վ. Պոկացյան**